ԳՈՅԱԿԱՆՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՈՐՈՇԻՉԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Հ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գրաբարում որոշիչը արտահայտվում է նաև գոյական անվամբ։ Գոյական անունը որոշիչ դառնալիս վերանում է իր առարկայական նշանակությունից և իմաստով մոտենում ածականին, վերջինիս պես արտահայտում որակական և այլ հատկանիշներ՝ հատկապես այն դեպքում, երբ այն վերցված է լինում որևէ հատկանիշի փոխարեն կամ կիրառվում փոխաբերական իմաստով։

Գրաբարում գոյականով արտահայտված որոշիչ-որոշյալի և բացահայտիչ-բացահայտյալի կապակցություններն ունեն մի շարք ընդհանրություններ, որը հաճախ դժվարացնում է ճշգրտորեն միմյանցից սահմանազատել այդ երկու կապակցությունները։

Պատկերը այլ է ժամանակակից հայերենում, ուր գոյականով արտահայտված որոշիչն ու բացահայտիչը իրարից տարբերվում են շարահյուսական որոշակի հատկանիշներով։ Արդի հայերենում բացահայտիչը պարտադիր շարադասվում է իր լրացյալից հետո, հաճախ համաձայնում նրան հոլովով, թվով, դեմքով և ամենակարևորը, առանձնացվում հատուկ տրոհվող հնչերանգով։ Առանձին դեպքերում նշված հատկանիշներից մի քանիսը կարող են չպահպանվել, բայց միշտ կլինեն ետադաս շարադասությունն ու բացահայտչին հատուկ տրոհվող արտաբերությունը։ Իսկ գոյական որոշիչը նախադասվում է իր լրացյալին, հոլովով, թվով կամ դեմքով երբեք չի համաձայնվում նրան։

Մինչդեռ գրաբարի գոյական որոշիչի և բացահայտչի սահմաններն հաճախ այնքան են մոտենում, որ դժվար է լինում տարբերակել։ Այդ դժվարությունը պայմանավորված է.

ա) գրաբարում իրենց լրացյալին հոլովով ու թվով կարող էին համաձայնել ինչպես բացահայտիչը, այնպես էլ որոշիչն ու հատկացուցիչը. բ) մեզ հայտնի չէ, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ինչպիսի արտաբերություն են ունեցել երկու գոյականների կապակցությունները. գ) ինչպես առհասարակ գրաբարի նախադասության շատ անդամներ, այնպես էլ որոշիչներն ունեին ազատ շարադասություն, որի պատճառով հաճախ արտաքին նմանություն է առաջանում ետադաս գոյական որոշիչի և բացահայտչի միջև։

Արդ, նման պայմաններում կարելի՞ է, արդյոք, ցույց տալ միջոցներ, որոնցով հնարավոր լինեն որոշել նախադասության այդ երկու անդամների տարբերակիչ սահմանները։ Դա հիմնականում հնարավոր է։

Նախ այն մասին, թե ինչպես են ճանաչվել ու գնահատվել գրաբարի գոյական որոշիչն ու բացահայտիչը անցյալի և արդի հայ քերականագիտության մեջ։

XVII դ. քերական Մ. Սեբաստացին գրում է, որ երբ երկու գոյականներ միևնույն բանն են նշանակում՝ դրված նույն հոլովով, առանց շաղկապի, ա-

պա նրանք մեկը մյուսին բացահայտիչ են, ինչպես՝ «Հռոմ քաղաք», «Գետ՝ Եփրատ», «Սիմոն Պետրոս» և այլն[1]։ Նա առհասարակ չի խոսում գոյականի ածականական գործածությունների մասին։ Բայց, ըստ Սեբաստացու, իրար կապված երկու գոյականների դեպքում, եթե կա հոլովական և թվային համաձայնություն, յուրաքանչյուր անդամ կարող է համարվել մյուս անդամի լրացումը։

Բաղդասար Դպիրն այս հարցի վերաբերյալ ունեցել է այլ ըմբռնում։ Ըստ նրա, «Սիմոն Պետրոս», «Յուդա Կիւրեղ» և նման կապակցություններում Սիմոն և Յուդա գոյականներն ածականաբար դրվում են հարակից գոյականի վրա և դառնում սրանց հատկացուցիչները՝ համաձայնելով նրանց հետ այնպես, ինչպես համաձայնում են ածականները գոյականների հետ։ Նույն կերպով էլ. շարունակում է Բ. Դպիրը, արական և իգական հատուկ անունները կապակցվում են հասարակ գոյական անունների հետ, ինչպես՝ «Սիմոն դպիրկոյսն Նունէ» և այլն[2]։

Մ. Հարությունյանը խոսելով բացահայտչի մասին, նշում է, որ այն կարող է լինել թե՛ նախադաս, թե՛ ետադաս և երկու դեպքում էլ համաձայնում է իր լրացյալին։ Սակայն պատահում է, որ բացահայտիչը մնում է անհամաձայն, և դա այն դեպքում, երբ նա դրվում է ուղղական հոլովով որպես ածական՝ «ի լերինն Սէիր», «Յորդանան գետոյ», կամ էլ դրվում է սեռական հոլովով որպես հատկացուցիչ «զգետով Եփրատայ» և այլն[3]։ Այստեղ նորությունն այն է, որ նա ածական է համարում գոյականի այն կիրառությունները միայն. որոնք ուղղական հոլովով գրված են իրենց լրացյալի թեքված հոլովաձևերի վրա։ Կարևորն այն է, որ Մ. Հարությունյանը որոշակի տարբերակում է սովորական բացահայտիչները և, նրա բառերով ասած, ածականական ու հատկացուցչային բացահայտիչներից։

Գ. Ավետիքյանը երկու գոյականների կապակցությունը, եթե նրանք հատկացուցիչ-հատկացյալներ չեն, դիտում է որպես բացահայտչի և բացահայտյալի կապակցություն։ Գոյականի ածականական գործածությունների մասին առանձին դիտողություններ չունի։

Սակայն նա գտնում է, որ բացահայտիչը սովորաբար ետադասվում է իր լրացյալին, իսկ երբ այն նախադասվում է, վերածվում է բացահայտյալի. օրինակ՝ «Հայր մեր Աբրահամ» կապակցության մեջ նա բացահայտիչ է համարում Աբրահամ բառը, իսկ «Աբրահամ հայ մեր» կապակցության մեջ՝ հայr բառը[4]։

Մ. Էմինը ևս այն կարծիքին է, որ գրաբարում բացահայտիչը գրվում է ետադաս, իսկ երբ շարադասվում է գոյականից առաջ, վերածվում է բացահայտյալի[5]։

Գոյականների ածականական կիրառությունների մասին համեմատաբար ավելի ընդարձակ է խոսել Մ. Չամչյանը։ Այդ հարցը նա քննում է նույնիսկ

---

1 Մ. Սեբաստացի, Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 391, տե՛ս նաև էջ 249։

2 Բաղդասար Դպիր Կոստանդնուպոլսեցի, Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիւրիմաց, Կոստանդնուպոլիս, 1706, էջ 327։

3 Մեսրովբ Հարությունյան, Քերականութիւն, Կոստանդնուպոլիս, 1803, էջ 201։

4 Գ. Ավետիքյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 328։

5 Մ. Էմին, Քերականութիւն հայկական լեզուի, Մոսկվա, 1846, էջ 138։

առանձին վերնագրի տակ՝ «Գոյական անուանք ի տեղի ածականաց»։ Այսուհդ նա որոշակի ասում է, որ գոյական անուններն երբեմն հարում են գոյական անուններին իբրև ածականներ. օրինակ՝ «ցlսաաաr խորհուրդս», «զգազան ցանկութիւն», «Վիշապ օձին», «ի Յոյն լեզու», «ի հայ բարբառ» և այլն։ Ուշադրավն այն է, որ նա, ի տարբերություն մյուս քերականների, գոյական անվան այդպիսի կիրառություններն այլևս բացահայտիչ չի համարում, որի համար էլ այդ երևույթն ուսումնասիրում է բացահայտչից առանձին։

Ա. Բագրատունու ձեռնարկում կան թռուցիկ մտքեր այն մասին, որ երբեմն գոյական անունները դրվում են այլ գոյական անունների վրա՝ ածականի նշանակությամբ։ Նա առաջինն է, որ նկատում է «ընտանութիւն բացահայտչին ընդ ածականին» ըստ իմաստի։ Սա զգալի առաջընթաց էր բացահայտչի ու գոյական որոշիչի իմաստային առանձնահատկությունները հասկանալու տեսակետից։ Սակայն Բագրատունին չունենալով հնչերանգի ըմբռնում, այս հարցում մնում է մոտավորապես իր ժամանակի քերականների մակարդակին։ Գոյականի ածականական կիրառությունները նա համարում է ոչ թե գոյականի առանձին, այլ իբրև գոյական բացահայտչի մի տարատեսակ։ Մյուս քերականների նման գտնում է, որ բացահայտչի պաշտոնում երբեմն կիրառվում են ածականաբար այն հատուկ տեղանունները կամ անձնանունները, որոնք դրվում են նախադաս և ուղղական հոլովով՝ լրացյալի թեք հոլովաձևերի վրա. օրինակ՝ «Մարգարէն Մովսէս», «քաղաքն Երուսաղեմ», «Բակուր բդեշխի»[8]։

Չալբխյան-Այարնյանի գրաբարի ձեռնարկում գոյականի ածականական կիրառությունների մասին նոր բան չի ասվում։ Վ. Չալբխյանի ելակետն այն է, որ երբ մի գոյական անուն դրվում է մի այլ գոյական անվան վրա, բացահայտում է նրան որևէ կողմից և դառնում նրա բացահայտիչը։ Ըստ էության, վերջինս կարող է շարադասվել իր լրացյալից թե՛ առաջ, թե՛ հետո և հոլովով համաձայնում է նրան։ Միաժամանակ Վ. Չալբխյանը գտնում է, որ կան գոյականներ, որոնք ածականի փոխարեն են գործածվում, ինչպես նաև կան ածականներ, որոնք թե՛ գոյական են, թե՛ ածական. օրինակ՝ «Հայաստան դրնդին», «յապառաժ վիմէ», «ի տրայ տիոց» և այլն[9]։

Ստ. Մալխասյանցը ևս գտնում է, որ գրաբարում բացահայտիչը կարող է լինել թե՛ ետադաս, թե՛ նախադաս։ Ըստ նրա՝ բացահայտիչ են այն բոլոր բառերը, որոնք գործածվելով ուրիշ ընդհանուր նշանակություն ունեցող բառի հետ, բացահայտում կամ որոշում են նրա մի մասնավոր կամ հատուկ տեսակը։ Բացահայտիչը, ըստ Մալխասյանցի, պատասխանում է ո՞ր հարցին։ Այսպես, օրինակ, «Լեառն Մասիս» կապակցության մեջ «Լեառն» բառն ունի ընդհանուր նշանակություն, իսկ «Մասիս» բառը բացահայտում է նրան, որոշակի դարձնելով ուրիշ բազմաթիվ լեռների մեջ. ո՞ր լեռը՝ Մասիս լեռը։ Նա բացահայտիչ-բացահայտյալի կապակցություններ է համարում՝ «զկարիճն զԱրիմն», «զԱրտիմէդ քաղաքաւ», «ի Փառան լեռնէ» և այլն։ Իսկ որոշիչի մասին

---

6 Մ. Չամչյան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779, էջ 143։

7 Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 323։

8 Նույն տեղում, էջ 323—325։

9 Վ. Չալբխյան, Քերականութիւն հայկազեան լեզուի..., Վիեննա, 1888, էջ 207 և 252—255։

խոսելիս Թռուցիկ նշում է, որ այն կարող է արտահայտվել նաև ածականաբար գործածված գոյականներով և բերում մի երկու օրինակ՝ «ծառայ այրն, «չար ժամանակ» և այլն։

Ըստ Ստ. Մալխասյանցի, որոշիչները պատասխանում են ինչպիսի՞. ո՞ր. քանի՞ հարցերի։

Այսպիսով, ստացվում է, որ թե՛ բացահայտչի, թե՛ որոշիչի համար առաջադրվում է միևնույն ո՞ր հարցը։ Իրականությունն այն է, որ գրաբարում էլ բացահայտիչը պատասխանում էր ո՞. ո՞վ. զի՞նչ հարցերի, իսկ ո՞ր հարցը տրվում էր միայն որոշիչի համար։ Ահա թե ինչու Ստ. Մալխասյանցի բերած օրինակների զգալի մասը ոչ թե բացահայտիչ է, այլ որոշիչ[10]։

Մ. Աբեղյանն էլ, գրաբարի նախորդ քերականների նման, գոյականի գործածությունը գոյականի հետ դիտում է որպես միայն բացահայտիչ[11]։

Ըստ Հ. Կոսիկյանի, գոյականի գործածությունը գոյականի հետ, եթե հատկացուցիչ չէ, բացահայտիչ է. օրինակ՝ «Վարդգէս մանուկն», «ղՔասախ գետով» և այլն[12]։ Գոյականի որոշիչային գործածությունների մասին որևէ նշում չի անում։

Ս. Ղազարյանը գրաբարի գոյական որոշիչի և բացահայտչի հարցում գրեթե նույնությամբ պաշտպանում է ավանդական տեսակետը։ Նա նույնպես գտնում է, որ գրաբարում որոշիչը կարող էր արտահայտվել նաև գոյական անվամբ, որն այդ պաշտոնում դրսևորում է ընդհանրապես առարկայի որակական հատկանիշը և բերում այսպիսի օրինակներ՝ «զքարաբլուրն մեծ բերդ», «շամփուր երկաթի» և այլն[13]։ Ըստ նրա՝ բացահայտիչը կարող է լինել թե՛ նախադաս, թե՛ ետադաս։ Եվ տալով գրաբարի գոյական որոշիչի և բացահայտչի տեսական մի շարք ճիշտ բացատրություններ, գործնականում բացահայտիչ-բացահայտյալի կապակցություններ է համարում հետևյալ գործածությունները՝ «յԱրտաշատ քաղաքի», «Իշխանն Անգեղ տան», «ի քաղաքէ Նազարեթէ», թեև, նրա կարծիքով, դրանք իրենց իմաստով և համաձայնության կանոններով մոտենում են որոշիչներին և որոշիչ-որոշյալի կապակցությունները են համարվում ժամանակակից հայերենում[14]։

Աշ. Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկի» ծանոթագրություններում նշվում է. «Հոգ է ընդունում նաև այն նախադաս որոշյալը, որի որոշիչը հատուկ անուն է՝ արքայն Արտաշէս, գետն Երասխ, քաղաքն Տիգրոն»[15]։

Ուրեմն այսպիսի օրինակները Աշ. Աբրահամյանը որոշիչ-որոշյալի կապակցություններ է համարում։

Այսպիսով, գրաբարի շատ ուսումնասիրողներ քննարկվող հարցի վերաբերյալ ունեցել են մոտավորապես միատեսակ հայացք, ըստ որի գոյականը այլ գոյականի հետ կապվում է կա՛մ իբրև հատկացուցիչ, հատկացյալ, կա՛մ իբրև բացահայտիչ, բացահայտյալ։ Բոլորովին անտեսելով հնչերանգը, որ այնքան էական նշանակություն ունի բացահայտիչ-բացահայտյալի ձևավոր-

10 Ստ. Մալխասյանց, Գրաբարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, էջ 88, 93։

11 Մ. Աբեղյան, Գրաբարի քերականություն, Երևան, 1936, էջ 163։

12 И. Кусикьян, Очерки исторического синтаксиса литературного армянского языка, М., 1959, стр. 20—21.

13 Ս. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 418։

14 Նույն տեղում, էջ 504 և 427։

15 Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964, էջ 410։

ման համար, այդ քերականները բավարար չափով հաշվի չեն առել նաև շարադասությունը, որը նույնպես բացահայտիչ-բացահայտյալի կապակցության ձևավորման մյուս կարևոր հատկանիշներից մեկն է։

Իսկ նրանք, ովքեր այս կամ այն չափով հաշվի են առել շարադասությունը կամ ածականի նշանակություն են տեսել գոյականի առանձին կիրառություններում, անտեսելով հնչերանգը, այդպիսի կիրառությունները, ընդհանուր առմամբ, համարել են բացահայտչի մի տարատեսակ։ Այնուամենայնիվ, գոյականի ածականական կիրառությունների մասին ունեցած ըմբռնումը մի կարևոր քայլ էր հետագայում այդպիսի գործածությունները բուն բացահայտչից տարբերելու համար։

Մեր կարծիքով արդի հայերենի գոյական որոշիչի ու բացահայտչի և V դարի գրաբարի գոյական որոշիչի ու բացահայտչի միջև, մի շարք տարբերությունների հետ միասին, կան ակնառու ընդհանրություններ, որոնց հաշվառումով ավելի ճիշտ կլիներ որոշել, թե տվյալ գոյականը որպես որոշի՞չ է հանդես եկել, թե՞ որպես բացահայտիչ։

Մենք ես գտնում ենք, որ բացահայտիչը չի կարող նախադաս լինել։ Նախադաս գոյականը կարող է լինել որոշիչ, որոշյալ, հատկացուցիչ, հատկացյալ և բացահայտյալ, բայց ոչ երբեք բացահայտիչ։ Սա պայմանավորված է հայերենի բացահայտչի հատուկ արտաբերությամբ, ըստ որի իբրև բացահայտիչ է ըմբռնվում ետադաս գոյականը՝ անկախ նախադաս գոյականի բովանդակությունից, որը կարող է լինել թե՛ եզակի, թե՛ ընդհանուր, թե՛ անհայտ, թե՛ շատ կողմերով հայտնի։ Ինչպիսի առարկա էլ լինի, այն միշտ կարող է բացահայտվել մի նոր հատկանիշով։

V գ. հուշարձաններում (հատկապես Աստվածաշնչում) տարածված լեզվա-ոճական երևույթ է այն, որ խոսքի մեջ անձի հատուկ կամ հասարակ անունները հիշատակելիս միաժամանակ նշվում է տվյալ անձի տոհմաբանությունը՝ նրան նախորդող սերունդների հաջորդաբար թվարկումով։ Նման դեպքերում տվյալ անձի անվան վրա դրվում է այլ գոյական անուն, սրա վրա էլ մի ուրիշը և այսպես շարունակ։ Ստացվում է գոյականների կապակցության մի շղթա, որի մեջ յուրաքանչյուր օղակ լրացնում է իր նախորդին։ Այսպիսի լրացումներն ու լրացման լրացումները անպայմանորեն բացահայտիչներ են և ոչ որոշիչներ, որովհետև դրանք, մանավանդ երբ երկար է նրանց շղթան, այլ կերպ չեն կարող արտաբերվել, քան միայն համապատասխան տրոհումներով, շեշտերով, ելևէջներով ու դադարներով։ Այսպիսի կապակցություններն ընդհանրապես շրջուն շարադասությամբ հանդես գալ չեն կարող. օրինակ՝ Եկաց եպիսկոպոսապետ Հայոց Մեծն Ներսէս,որդի Աթանագինեայ, որդւոյ Յուսկան, որդւոյ Վրթանոյ, որդւոյ սրբոյն Գրիգորի (Մխ, III, Ի, 278—9), Տեսիլ Եսեա Մուրթքէ որդի Յայիրայ, որդւոյ Սեմեայ, որդւոյ Կիսեայ, յազգէ Բենիամինի, այր Հրեայ (Եսթ., ԺԱ, 2)... Աստիճանականության այս շղթան երբեմն խիստ երկարում է։

Եթե նման կապակցություններում հաջորդական թվարկումը սահմանափակվում է միայն առաջին և երկրորդ աստիճանների նշումով, բայց այդ աստիճաններն (լրացում-լրացյալ) իրենց հերթին ունեն լրացումներ, ապա դրանք նույնպես բացահայտիչ-բացահայտյալներ են, քան որոշիչ-որոշյալներ։ Պատճառն այն է, որ իրար հետ են կապվում երկու կապակցություններ, որոնց մեջ ինչ-որ չափով արտասանական դադար պետք է լինի, մանավանդ եթե հաշվի

տեսնենք այդ կապակցությունների ներքին, տրամաբանական կողմը. օրինակ՝ վասն կնոջ իւրոյ Աշխենայ տիկնոջ (Ագթ., ԾԵ. 397), Սկիզբն արարեալ յաւ-մացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ (Եղշ., I, 6), Արտաշիսի արքայի հայոց, որդւոյն Վռամշապհոյ (Եղշ., I, 6)։

Գրաբարում շատ են տարածված այն կապակցությունները, որոնցում միայն մի գոյականն ունի լրացում (հատկապես հատկացուցիչ)։ Սրանք նույն-պես, ըստ երևույթին, ունեցել են բացահայտիչ-բացահայտյալին հատուկ ար-տահայտություն։ Սակայն բացառված չէ, որ նրանք, գոնե առանձին դեպքերում, եղած լինեն որպես որոշիչ-որոշյալի կապակցություններ. օրինակ՝ Յոռժամ ասիցէ Յեսու որդի Նաւեայ (ԵԿ, II, ԻԵ, 131), Որ գթացար յԻսահակ ծառայ քոյ (Ագթ., ԺԵ, 93), Սպանանել զՔահանայապետն Աստուծոյ զՎրթանէս (ՓԲ. III, Գ, 7)։

Սովորաբար բացահայտիչ-բացահայտյալի և ոչ որոշիչ-որոշյալի հարա-բերություն են արտահայտում այն կապակցությունները, որոնցում նախադաս գոյականը կամ գոյականաբար կիրառված այլ խոսքի մասերն արտահայտում են ընդհանուր հասկացություն, իսկ ետադաս գոյականները բացահայտում են այդ ընդհանուրի մեջ մտնող մասնավոր հասկացությունները։ Կապակցու-թյան այս տիպը պահպանվել և լայնորեն կիրառվում է նաև արդի հայերե-նում։ Ահա՝ Եւ տայր պատերազմ շուրջ ընդ ամենայն թշնամիս իւր, ընդ Մո-վաբայ եւ ընդ որդիսն Ամոնայ եւ ընդ որդիսն Եդովմայ եւ ընդ Բեթովրայ եւ ընդ թագաւորին Սուբայ եւ ընդ այլազգիսն (Ագթ., ԺԴ, 47), Արդ ի բաց թօթափեցէք եւ դուք զայն ամենայն. զբարկութիւն, զսրտմտութիւն, զչարու-թիւն, զհայհոյութիւն, զխեղկատակութիւն ի բերանոց ձերոց (Կող., Գ, 8)...

Շարադասությունը ևս զգալի չափով կարող է նպաստել ետադաս գոյա-կան որոշիչների տարբերակմանը։ Սովորաբար ետադաս գոյական որոշիչներն անմիջապես դրվում են իրենց լրացյալի մոտ։ Հետևաբար, եթե ետադաս գո-յականներն ընդմիջված են նախադասության այլ անդամներով, ապա նրանք ոչ թե որոշիչներ են, այլ բացահայտիչներ։ Պետք է նկատի ունենալ, որ այդ-պիսի կապակցությունները, հենց նախադասության կառուցվածքային անհրա-ժեշտությամբ, չեն կարող արտաբերվել այլ կերպ, քան բացահայտիչ-բացա-հայտյալի կապակցությանը հատուկ հնչերանգով։ Նման դեպքերում, որպեսզի պահպանվի նախադաս և ընդմիջված կամ հեռու ընկած գոյականի քերակա-նական-իմաստային կապը, պետք է որ նրանք զատվեն նաև արտաբերու-թյամբ՝ միջանկյալ անդամները կամ նախադասությունները առանձնացնելով նրանցից տրոհվող արտաբերությամբ։ Օրինակ՝ Արտաւազդայ, ոչ գտեալ, ա-սէն, քաջի որդւոյն Արտաշիսի, տեղեկիկ ապարանից (Մխ, I, Լ (ԼԱ), 84), Առ դու զորդիդ քո սիրելի զոր սիրեցեր՝ զԻսահակ (Ծննդ., ԻԲ, 2), Ունիմք այսու-հետեւ Քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս, զՅիսուս (Եբր., Դ, 14)...

Թեև գրաբարում կարող են լինել սովորական բացահայտչի այլ օրինակ-ներ ևս, բայց սահմանափակվենք վերը նշվածով և ցույց տանք այժմ այն հիմ-նական դեպքերը, երբ ետադաս գոյականները ոչ թե բացահայտիչներ են, այլ որոշիչներ։

1. Երբ իրար հետ կապված գոյականներից մեկը, լինի նախադաս թե ետա-դաս, տրամաբանորեն կամ քերականորեն պահանջում է ո՞ր հարցը, ապա այն որոշիչ է։

2. Եթե անվանական կապակցություններն ըստ կազմության պարզ են,

այսինքն՝ նրանց անդամներն իրենց հերթին չունեն լրացումներ կամ լրացման լրացումներ, ապա դրանք հանդես են գալիս որպես որոշիչի և որոշյալի կապակցություններ. օրինակ՝ Ապա երթեալ հասանէր ի վերա նոցա զօրավարն Վաշէ (ՓԲ, III, Դ. 9), Առ ափն Տղմուտ գետոյն (Եղշ., V, 116), Յաղագս շինուածոյ Սրուանդաշատ քաղաքի (Մխ, II, ԼՌ, 165)։

Բացի վերոհիշյալից, գոյականով որոշիչ-որոշյալի և բացահայտիչ-բացահայտյալի կապակցությունների տարբերակման հիմքում կարող են դրվել իմաստային և այլ գործոններ։ Եթե այս առումով խմբավորելու լինենք վերոհիշյալ 2-րդ ենթակետի տակ մտնող կապակցությունները, ապա կարող ենք ասել, որ գոյական անունները որոշիչ-որոշյալի կապակցություններ են ստեղծում հետեյալ դեպքերում։

Երբ կապակցության անդամներից մեկը անձի հատուկ անուն է, իսկ մյուսը՝ հասարակ անձնանուն, ապա գոյականներից յուրաքանչյուրը կարող է դիտվել իբրև մյուսի լրացում. օրինակ՝ Որդի Արկաղու կայսեր (Կոր., ԺԶ, 64), Արքային Տրդատայ (ՓԲ, III, Ա, 5), Եւ թարգման կացոյց զՍահակ եպիսկոպոս (Եղշ., VII, 162)...

Երբ կապակցության հատուկ անուններից մեկը հատուկ տեղանուն է, իսկ մյուսը՝ հասարակ։ Նման դեպքերում որպես որոշիչներ են հանդես գալիս հատուկ անունները, թեև առանձին դեպքերում հասարակ անունները ևս կարող են մտածվել իբրև որոշիչ. օրինակ՝ Պոնտոս ծովու (Մխ, II, ԺԱ, 121), Անցո՛ ընտ Պահ դուռն ի ներքս (Եղշ., I, 9), Ի Թիլն աւանի (ՓԲ, III, Բ, 6), Ի լերինն Դերաղ (Քոր., ԺԱ, 29)։

Հայտնի է, որ գրաբարում գոյական անվան սեռի կարգ չի եղել։ Երբ առանձին դեպքերում հարկ է եղել սեռային տարբերակում մտցնելու տվյալ գոյական անվան ըմբռնման մեջ, նրա հետ գործածել են առանձին բառեր՝ այր (արական սեռի համար), կին (իգական սեռի համար)։ Նման պարագայում ևս առաջանում են որոշիչ-որոշյալի կապակցություններ։ Օրինակ՝ Առն մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ իւր (Կորնթ., ԺԱ, 7), Որ հայր ի կին մարդ առ ի ցանկանալոյ, անդէն շնացաւ ի սրտի իւրում (ԵԿ, IV, ԺԲ, 192)...

Այն գոյական անունները, որոնք դրվելով այլ գոյականի վրա, ցույց են տալիս վերջինիս աղգությունը կամ լեզուն, միշտ որոշիչ են դառնում. օրինակ՝ Եւ վկայեն որ աստ առ ձեզ հայ մարդիկ են (ՂՓ, III, Զ, 323), Ի ձեռն Յուդայի հրէի (Մխ, II, ԶԷ, 236), Որպէս և ոչ յասորի լեզու՝ ջուր կամ երկին (ԵԿ., IV, Ե, 181)...

Երբ հասարակ գոյական անունները գործածվում են փոխաբերական իմաստով կամ ցույց են տալիս հարակից գոյական անվան սերումը, ծագումը, ինչից լինելը և նման հատկանիշներ, ապա դրանք սովորաբար հանդես են գալիս որպես որոշիչներ. օրինակ՝ Արդ Զրուանն եթէ արջառ էր, զկարիճն զԱրհմն դիարդ ծնանէր. և եթէ գայլ էր զԳառնն գՈրմիզդ հիմ ծնանէր (ԵԿ., II, Գ, 85), Նա հուր հեր ունէր, Ապա թէ բոց ունէր մօրուս (Մխ., I, ԼԱ (ԼԲ) 86)։

Մարդու տարիքը կամ հասակը ցույց տվող տղայ և մանուկ բառերը դրվելով տիՀ բառի կամ հատուկ անձնանունների վրա, դառնում են նրանց որոշիչներ. օրինակ՝ Սկիդքն արար առաքինութեանն անդստին ի տղայ տիոց իւրոց (Եղշ., VII, 192), Եւ մանուկն Սամուէլ կայր ի սպասու Տեառն (Ա Թագ., Գ, 1), Հաղերձ մանկամբն Արտաշիսիւ (Մխ, II, ԽԶ, 170)։

Գոյական որոշիչը համաձայնության մեջ դրսևորում է այնպիսի օրինա-

չափումներ, որոնք հատուկ են ածական որոշիչին։ Սակայն այն ունի նաև մասնակի առանձնահատկություններ։

Ածականների նման գոյականը ևս շարադասվում է գոյականից թե՛ առաջ, թե՛ հետո, տարածվածը, սակայն, ետադաս գործածություններն են։

Ըստ շարադասության գոյական որոշիչն ունենում է համաձայնության հետևյալ կանոններն ու առանձնահատկությունները։

1. Եթե նախադաս գոյական որոշիչը հատուկ տեղանուն է, որպես կանոն, հոլովով չի համաձայնում որոշյալին. օրինակ՝ ի կողմն Յօշական բերդին (ՓԲ, III, է, 15), Առ դրունս Արտաշատ քաղաքի (Ագթ., Բ, 22), Ջափամբ Իսան գետոյն (Կոր., Թ, 54)։

Հատուկ անունները հոգնակի թիվ չունեն, գործածվում են միայն եզակի թվով։ Սովորաբար եզակի թվով են գործածվում նաև գոյական որոշյալները. եթե նրանց նախադաս գոյական որոշիչը բազմակի չէ։

Հատուկ տեղանունով արտահայտված նախադաս որոշիչը խիստ հազվադեպ կարող է համաձայնել իր որոշյալին. օրինակ՝ Ջերիցունս եկեղեցւոյն Տիսպոնի քաղաքի (ՓԲ, IV, ԺԶ, 106), Ի Սիոնէ լեռնէ (Դ Թագ., ԺԹ, 3)...

2. Եթե նախադաս գոյականը անձի հատուկ անուն է, սովորաբար հոլովով և թվով համաձայնում է ետադաս որոշյալին. օրինակ՝ Սմբատայ ասպետի (Մխ, III, Լէ, 303), Առ Թեոդոսի կայսեր (ԵԿ, II, ԺԴ, 108), Յովսէփ արքայէ (Եղշ., II, 29)...

Սակավ գործածություններում նախադաս հատուկ անձնանունը կարող է հոլովով անհամաձայն մնալ. օրինակ՝ Եւ հրաման յԱւգոստոս կայսերէ (Ղուկ., Բ, 1), Որոշումն Բակուր բդեշխին (Մխ, III, 251), Փաւստոս եպիսկոպոսի (ՓԲ, IV, 224)...

3. Հասարակ անունները (հայ, յոյն, ասորի, քոյր, հուր, կարին, պարսիկ...) նախադաս կիրառությամբ սովորաբար թեքված հոլովաձևերով հանդես չեն գալիս։

Այսպիսով, եթե նախադաս գոյական որոշիչը իր ցույց տվող հատուկ կամ հասարակ անուն է, ընդհանրապես հոլովով չի համաձայնում որոշյալին, բայց լինում են աննշան բացառություններ։ Իսկ եթե նախադաս գոյական որոշիչը անձ ցույց տվող անուն է, ընդհանրապես համաձայնում է իր լրացյալին։

5) Եթե ետադաս գոյական որոշիչը հատուկ տեղանուն է, ընդհանրապես հոլովով չի համաձայնում որոշյալին. օրինակ՝ Ի լերինն Գեբաղ (Բօբ., ԼԱ, 29), Ի քաղաքիս յԵրուսաղէմ (Ղուկ., ԻԴ, 49), Ի նմին աւանի Կուաշ (Մխ., III, ԻԲ, 282)...

Խիստ հազվադեպ ետադաս հատուկ տեղանունները հոլովով համաձայնում են որոշյալին. օրինակ՝ Յերկրէն Հայաստանէ (ՓԲ, III, Ժ, 21), Ի քաղաքէ Նազարեթէ (Ղուկ., Բ, 4)...

Հաճախ մեր մատենագիրները հատուկ տեղանունները գործ են ածում տվյալ տեղում ապրող բնակիչների անունից՝ սեռական հոլովով։ Նման պարագայում գոյական անունների կապակցությունները վերածվում են որոշիչային իմաստով հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունների. օրինակ՝ Ի Կեսարացւոց քաղաքին (Ագթ., ՃԻԴ, 451—452), Ի քաղաքն Մելիտինացւոց (Կոր., ԺԶ, 66), Ի Սեբաստացւոց քաղաքին (Մխ., II, Ձ, 221)...

Եթե ետադաս որոշիչը հատուկ անձնանուն է, ապա, որպես կանոն, հոլովով միշտ համաձայնում է որոշյալին. օրինակ՝ Թագաւորին Պապայ (Մխ.,

III, ԼԹ, 306), Զօրավարին Վաչէի (ՓԲ, III, ԺԱ, 23), Հայրապետին Վրթանայ (ՓԲ, III, ԺԱ, 23), Հանդերձ զօրավարաւն Վաչէիւ (ՓԲ, IV, է, 17)...

Ետադաս շարադասությամբ հատուկ անձնանունները ավելի սակավ են հանդես դալիս որպես որոշիչ, քան հատուկ տեղանունները։

Այսպիսով, ետադաս դոյական որոշիչի պաշտոնով հիմնականում հանդես են դալիս հատուկ տեղանունները, որոնք ընդհանրապես հոլովով չեն համաձայնում իրենց որոշյալին. կան առանձին բացառություններ։ Հաճախ հատուկ անձնանունները ևս ետադասվելով դոյականին, դառնում են որոշիչներ, որոնք հոլովով միշտ համաձայնում են որոշյալին։

Իսկ ամբողջ ասվածից բխում է, որ առհասարակ իր ցույց տվող հատուկ թե հասարակ անունները, աննշան բացառություններով, հոլովով չեն համաձայնում ինչպես նախադաս, այնպես էլ ետադաս որոշյալին։ Մինչդեռ անձ ցույց տվող անունները սովորաբար համաձայնում են թե՛ նախադաս, թե՛ ետադաս որոշյալներին։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագթ.— Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909։

2. ԵԿ— Եղնիկայ վարդապետի Կոդբացւոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914։

3. Եղշ.— Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957։

4. Կոր.— Կորիւն Վարք Մաշտոցի, բնագիրը, հեռագրական այլ ընթերցվածքներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941։

5. ՂՓ—Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1907։

6. Մխ— Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913։

7. ՓԲ— Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1883։

Մնացած համառոտագրությունները վերաբերում են Աստվածաշնչին՝ հրատարակված Կ. Պոլսում, 1895 թ.։

СОГЛАСОВАНИЕ ОПРЕДЕЛЕНИЯ, ВЫРАЖЕННОГО ИМЕНЕМ СУЩЕСТВИТЕЛЬНЫМ, В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Г. М. АВЕТИСЯН

Резюме

Хотя имеется много общностей между определением, выраженным именем существительным, и приложением, однако эти две грамматические категории.

Если определения, выраженные именами существительными, обозначают человека, то, обычно, согласуются в падеже и в числе как с предпозитивными, так и с постпозитивными определяемыми, а если обозначают вещество, то не согласуются.